



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19074

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 358-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/211-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրջյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի և Կարեն Սարգսյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Արթուր Գրիգորյանին (արտոնագիր՝ թիվ 255) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության (**այսուհետ, նաև՝ Ընկերություն**) ներկայացուցիչ, նույն ընկերության իրավաբանական ծառայության պետ Սումբատ Սումբատյանը (**այսուհետ, նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**)՝ հայտնել է, որ Ընկերության և «ՍՍ-Գրուպ» ՍՊ ընկերության, որի տնօրենը հանդիսանում է փաստաբան Արթուր Գրիգորյանը, որպես Կատարող, միջև 26.08.2016թ. և 02.08.2016թ. կնքվել են իրավաբանական ծառայությունների մատուցման համապատասխանաբար թիվ 01-16 և 02-16 պայմանագրերը: Նշված պայմանագրերի 2-րդ կետերի 2.2.3 ենթակետերի համաձայն, վերջինս պարտավորվել է Ընկերության բանավոր և/կամ գրավոր պահանջով տեղեկատվություն տրամադրել պայմանագրի շրջանակներում մատուցվող

24 դեկտեմբերի 2019թ.
Թիվ ԿԳ/211-Ա

ծառայությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Դիմողը նաև հայտնել է, որ սկսած 2017 թվականի հոկտեմբերից Պայմանագրերի 2-րդ կետի 2.2.3 ենթակետի պահանջները Կատարողի կողմից խախտվել են, քանի որ Կատարողի կողմից Պատվիրատու Ընկերությանը տրամադրված որևէ էլեկտրոնային հասցե, կամ հեռախոսահամար չի գործում, ինչպես նաև Ընկերությանը հայտնի չէ որևէ տեղեկատվություն Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մասին:

Գրությամբ, Դիմողը վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» դրույթները, խնդրել է «ՍՍ-Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն, փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության, իսկ գրությանը կից ներկայացրել է լիազորագրի և նույնականացման քարտի պատճենները:

18.04.2019թ. Պալատ մուտքագրված 16.04.2019թ. թիվ Նյու-69 գրությամբ Դիմողը ի լրումն իր 22.03.2019թ. գրության ներկայացրել է 02.08.2016թ. կնքված թիվ 02-16, 26.07.2016թ. կնքված թիվ 01-16 և 01.07.2016թ. կնքված թիվ 01/01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի, ինչպես նաև 02.08.2016թ. պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 11.05.2017թ. համաձայնագրի և 02.08.2016թ. պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 26.04.2017թ. կնքված թիվ 02-16/1 համաձայնագրի պատճենները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 25.04.2019թ. թիվ 152-Ա/ԿԳ-19074 որոշմամբ (**այսուհետ նաև՝ Որոշում**)՝ փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 255) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

30.04.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել, սակայն ներկայացրել է լրացուցիչ փաստաթղթեր՝ գործի նյութերին կցելու նպատակով:

15.10.2019 թվականի Խորհրդի նիստին ներկայացել է Դիմողի ներկայացուցիչ Արտակ Երեմյանը և ըստ էության հաստատել է Դիմումում նշված հանգամանքները՝ հավելելով, որ փաստաբան Արթուր Գրիգորյանը չի մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունները և որ որևէ գործողություն փաստաբանի կողմից բարեխիղճ և պատշաճ չի կատարվել: Դիմողի ներկայացուցիչը նշել է նաև, որ 2017 թվականի հոկտեմբերից հնարավոր չի եղել փաստաբան Արթուր Գրիգորյանից տեղեկություն ստանալ քրեական գործով կատարված աշխատանքների վերաբերյալ:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Դիմողի դիմումի վերաբերյալ փաստաբան Արթուր Գրիգորյանին առաջարկվել է գրավոր բացատրություն ներկայացնել, սակայն փաստաբանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Նախապատրաստողը 26.06.2018թ. կազմել է եզրակացություն, որում, թվարկելով գործում առկա փաստաթղթերը, նշել է, որ փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Խորհուրդը:

Գործը Խորհրդին է հանձնվել 28.06.2019թ.:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 15.10.2019թ. ժամը 19:00-ին և 24.12.2019թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված*

փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը՝ հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Ընկերության, որպես Պատվիրատու, և «ՍՍ-Գրուպ» ՍՊ ընկերության, որպես՝ Կատարող, որի տնօրենը հանդիսանում է փաստաբան Արթուր Գրիգորյանը, միջև կնքվել է թվով 3 պայմանագրեր՝

- 01.07.2016թ. թիվ 01/01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով կատարողը պարտավորվել է քրեական և քրեադատավարական դատավարության ոլորտներում առաջացող հարաբերությունները կարգավորող օրենսդրությունների վերաբերյալ ներկայացնել բանավոր և/կամ գրավոր խորհրդատվություն և այլն (1.2 կետ): Ծառայությունների արժեքը սահմանվել է 880.000 ՀՀ դրամ (3.1 կետ): Պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվել մինչև 01.01.2017 թվականը:

- 26.07.2016թ. թիվ 01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով կատարողը պարտավորվել է ներկայացնել Պատվիրատուի շահերը Աշոտ Խլղաթյանի նկատմամբ հարուցված քրեական գործով և այլն (1.2 կետ): Ծառայությունների արժեքը սահմանվել է 12.820.000 ՀՀ դրամ (3.1 կետ):

- 02.08.2016թ. թիվ 02-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով կատարողը պարտավորվել է կատարման ներկայացնել ԵԿԴ/0405/02/16 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հոկտեմբերի 2-ի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը և այլն (1.2 կետ): Ծառայությունների արժեքը սահմանվել է 16.500.000 ՀՀ դրամ (3.1 կետ):

Վերոնշյալից հետևում է, որ կնքվել է ընդհանուր 30.200.000 (երեսուն միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով պայմանագրեր (01.07.2016թ. պայմանագրով՝ 880.000 ՀՀ դրամ, 26.07.2016թ. պայմանագրով՝ 12.820.000 ՀՀ դրամ և 02.08.2016թ. պայմանագրով՝ 16.500.000 ՀՀ դրամ), սակայն ըստ դիմող կողմի փաստաբանի կողմից ծառայություններ չեն մատուցվել և դիմող կողմը տեղեկություն չունի այդ ծառայությունների ընթացքի մասին:

Նշված փաստերը հաստատվում են Դիմողի կողմից ներկայացված դիմումով, դրան կից ներկայացված պայմանագրերով:

2. «Դատալեքս» դատական տեղակատվական համակարգից հանված տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԿԴ/0405/02/16 քաղաքացիական գործը 27.04.2017 թվականից կասեցված է:

3. Դիմողի կողմից դիմումը Պալատ է ներկայացվել 25.03.2019

թվականին:

Նշված փաստը հաստատվում է դիմումով

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Փաստաբան Արթուր Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 10.10.1995 թվականից: Արթուր Գրիգորյանի նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում 13 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (12 ավարտված և 1 ընթացիկ):

• Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 05.02.2015թ. թիվ ԿԳ/31-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով և լրացուցիչ վերապատրաստման դասերի մասնակցություն 8 ժամ ժամաքանակով: Հիմնական տույժը մարված է, իսկ լրացուցիչը՝ ոչ:

• Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 28.09.2015թ. թիվ ԿԳ/105-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 10.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

• Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 06.10.2015թ. թիվ ԿԳ/136-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 15.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

• Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 17.10.2017թ. թիվ ԿԳ/94-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ վերապատրաստման դասերի մասնակցություն 8 ժամ ժամաքանակով: Տույժերը մարված չեն:

• Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 17.01.2018թ. թիվ ԿԳ/03-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ խիստ նկատողություն: Տույժը մարված է:

• Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 03.05.2018թ. թիվ ԿԳ/79-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 50.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

- Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 05.06.2018թ. թիվ ԿԳ/96-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

- Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 05.06.2018թ. թիվ ԿԳ/97-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

- Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 05.06.2018թ. թիվ ԿԳ/98-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/103-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 10.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

- Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 24.07.2018թ. թիվ ԿԳ/137-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով: Տույժը մարված չէ:

- Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 26.11.2019թ. թիվ ԿԳ/160-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ արտոնագրի գործողության դադարեցում: Տույժն ուժի մեջ չի մտել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հեղուկալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետը սահմանում է, որ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

7.1. Խորհրդի պատճառաբանությունը 01.07.2016թ. թիվ 01/01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի մասով.

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:

Նշված իրավական նորմով նախատեսված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում փաստաբանի վստահորդը կամ այլ իրավասու անձ կարող է Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման հիմքով ներկայացնել հաղորդում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նշված ժամկետն անցնելը (այդ ժամկետի ընթացքում կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում (դիմում) չներկայացնելը) շահագրգիռ անձի համար առաջ է բերում անբարենպաստ

իրավական հետևանքներ, այն առումով, որ նույնիսկ կարգապահական պատասխանատվության հիմքի առկայության (փաստաբանին վերագրվող արարքը հաստատվելու) պարագայում Օրենքի իմպերատիվ պահանջից ելնելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չի կարող, իսկ այն հարուցման դեպքում ենթակա է կարճման:

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում՝ երբ անցել են սույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:

Ըստ սույն կարգապահական գործում առկա փաստաթղթերի և փաստական տվյալների՝ 01.07.2016թ. թիվ 01/01-16 պայմանագրով փաստաբանը պետք է դիմողին տրամադրեր խորհրդատվություն քրեական և քրեադատավարական դատավարության ոլորտներում առաջացող հարաբերությունները կարգավորող օրենսդրությունների վերաբերյալ: Նշված պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվել մինչև 01.01.2017 թվականը: Այսինքն, նշված գործողությունները փաստաբանը պետք է կատարեր մինչև 01.01.2017 թվականը, իսկ դիմումը մուտք է եղել Պալատ 22.03.2019թ., այսինքն՝ Օրենքի նշված դրույթով նախատեսված վեցամսյա ժամկետն անցնելուց հետո, որպիսի պայմաններում Պատասխանողի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման: Հետևաբար, դիմումով փաստաբանին վերագրվող արարքը, այն է՝ անգործություն ցուցաբերելը, դիմողի կողմից պետք է հայտնաբերված լիներ մինչև 01.01.2017 թվականը:

Նման պայմաններում, եթե Դիմողը գտնում էր, որ հիշյալ պայմանագրերի համաձայն իրավաբանական օգնություն տրամադրելու ընթացքում փաստաբանի կողմից թույլ են տրվել խախտումներ, ապա նա կարող էր իր կողմից փաստաբանին վերագրվող խախտումը հայտնաբերելուց (01.01.2017 թվականից) սկսած օրենքով սահմանված ժամկետում ձեռնամուխ լինել իր իրավունքների պաշտպանությանը, ինչը չի արել:

Ավելին, հատկանշական է, որ հենց Դիմողն է ընդունել այն հանգամանքը, որ 2017 թվականի հոկտեմբերից Կատարողի կողմից Պատվիրատու Ընկերությանը տրամադրված որևէ էլեկտրոնային հասցե, կամ հեռախոսահամար չի գործում և Ընկերությանը հայտնի չէ որևէ տեղեկատվություն Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մասին: Հետևաբար, Դիմողի կողմից նշված ժամկետից արդեն իսկ հայտնաբերված է եղել փաստաբանի կողմից ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հանգամանքը:

Փոխարենը, փաստաբան Արթուր Գրիգորյանի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտման մասին Պալատին հայտնել է 2019 թվականի մարտի 25-ին, այսինքն՝ կարգապահական պատասխանատվության առերևույթ հիմքը ծագելուց (փաստաբանի կողմից Օրենքի կամ

Կանոնագրքի առերևույթ խախտում թույլ տալուց) ավելի քան մեկ տարի անց:

Վերոգրյալի հաշվառմամբ Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի կողմից նշած հիմքով փաստաբան Արթուր Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը 01.07.2016թ. թիվ 01/01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի մասով ենթակա է կարճման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումը ներկայացնելու պահին անցել է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար Օրենքով սահմանված վաղեմության ժամկետը, այն է՝ կարգապահական պատասխանատվության հիմքը (փաստաբանի կողմից առերևույթ խախտում կատարելը) հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետը, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հիմքը ծագելուց հետո՝ մեկ տարվա ժամկետը:

Միաժամանակ, Պալատն արձանագրում է նաև, որ վերոգրյալ հիմնավորումներով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարճման ենթակա լինելու պայմաններում նույն պայմանագրի մասով Դիմումում նշված արարքների գնահատմանը Խորհուրդն անդրադարձ չի կատարում:

7.2. Խորհրդի պատճառաբանությունը 02.08.2016թ. թիվ 02-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի մասով.

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Նույն կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Կարգի վերոնշյալ իրավադրույթներից հետևում է, որ դիմողը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք Պալատի մոտ կարող են ձևավորել ողջամիտ համոզմունք, որ դիմումում նշված փաստական հանգամանքներն իրականում տեղի են ունեցել, և առկա է կարգապահական գործով պատասխանող փաստաբանի կողմից թույլ տրված՝ Օրենքով և Կանոնագրքով արգելված արարք: Եթե դիմողը չի կատարում իր նշյալ վարույթային պարտականությունը, ապա կրում է դրա բացասական հետևանքը՝ փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի կարճման տեսքով:

Ինչ վերաբերում է 02.08.2016թ. թիվ 02-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով փաստաբանի վարքագիծը գնահատելուն, ապա նույն պայմանագրով կատարողը պարտավորվել է կատարման ներկայացնել ԵԿԴ/0405/02/16

քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հոկտեմբերի 2-ի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, ապա «Դատալեքս» դատական տեղակատվական համակարգից հանված տեղեկատվության համաձայն՝ թիվ ԵԿԴ/0405/02/16 քաղաքացիական գործը 27.04.2017 թվականից կասեցված է:

Նման պայմաններում ծառայությունների մատուցման պայմանագրի առարկա հանդիսացող գործողությունները կատարման ենթակա չլինելու պայմաններում Դիմումով նշված պայմանագրի մասով փաստաբանին վերագրվող վարքագծի քննարկումն այլևս առարկայազուրկ է, իսկ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չէ:

7.3. Խորհրդի պատճառաբանությունը 26.07.2016թ. թիվ 01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի մասով.

Ինչ վերաբերում է 26.07.2016թ. թիվ 01-16 իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրին, ապա նշված պայմանագրի առարկան է կազմել կատարողի կողմից Պատվիրատուի շահերի ներկայացումը Աշոտ Խլղաթյանի նկատմամբ հարուցված քրեական գործով:

Պալատը գտնում է, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կարող էին վկայել Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի խախտման մասին: Մասնավորապես, կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը չի ապացուցել, թե կոնկրետ ինչ գործողություններ պետք է կատարեր փաստաբանը՝ նշված պայմանագրի շրջանակներում, որոնք չկատարելը կկարողանային վկայել փաստաբանի կողմից բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև գործի մասին տեղեկացնելուց և վստահորդին հետաքրքրող հարցերին պատասխանելուց խուսափելու մասին համոզման գալու համար: Այսինքն, հաշվի առնելով պայմանագրի ընդհանրական բնույթը, Խորհուրդը գտնում է, որ Դիմողը առնվազն պետք է նշեր և հաջորդիվ նաև ապացուցեր թե կոնկրետ ինչ հանձնարարություններ է տվել փաստաբանին, որոնք վերջինս չի կատարել: Հիմք ընդունելով վերոգրյալը, Պալատը գտնում է, որ Պատասխանողի կողմից վերոգրյալ դրույթների խախտման փաստը հանդիսանում է չապացուցված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 25.04.2019թ. թիվ 152-Ա/ԿԳ-19074 որոշմամբ Փաստաբան Արթուր Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 255) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Գայանե Դեմիրջյան

24 դեկտեմբերի, 2019թ.
թիվ ԿԳ/211-Ա
ք. Երևան